Գէորգ Ղազարեան Քէչէճեանց .	1
Կարապետ Խաչատրեան . .	1
Ստեփաննոս Զաքիրեան . .	1
Գրիգոր Գալստեան . . .	1
Պօղոս Բորովեան . .	1
Ծերոն Մկրտչեան . . .	1
Կարապետ Բանոսեան . . .	2
Յովհաննէս Քահանայ Տոխսանեանց	— 50
Յակոբ Քահանայ Շատուրեանց .	1
Պօղոս Թամանցեան . . .	1
Մինաս Զաքիրեան . . .	1
Գէորգ Թամանցեան . . .	1
Խաչերէս Կենճեցեան . . .	1
Գաբրիէլ Տէր Կարապետեան Տոխսանեանց	— 20
Յակոբ Խլդճեանց . . .	10
Թադէոս Քեօլէ-Շահինեանց .	15
Եղբարք Սակիրեանք . . .	20
Մարտիրոս Մենիքեանց . .	10
Յովակիմ Խոճեանց . . .	10
Յոհան Խլդճեանց . . .	5
Մարտիրոս Պաղտիկեանց . .	3
Սերովբէ Նալպանտեան . .	10
Կարապետ Խայսերցեան . .	5
Յովհաննէս Խաղեղեանց . .	1
Յարութիւն Աբջեանց . . .	1
Յովհաննէս Ամեմեանց . .	1
Հասարակութիւն Զալթր գեղջ .	70 54
Հասարակութիւն Թուփտի գեղջ .	74 90
Հասարակութիւն Մեծ-Սալայ գեղջ .	84 30
Հասարակութիւն Փոքր-Սալա գեղջ .	13 50
Հասարակութիւն Նիսվլիթայ գեղջ .	16 —

Խմբագրութեան Աբարար ամսագրոյ.

Յայտնումենք ահա մի ցանկալի լուր, որը որ խնդրումենք խոնարհաբար տեղիք տալ պատուական Աբարարայ էջերի մէջ։

Մեր Երևան քաղաքի օուրբ Սիմէօն Եկեղեցւոյ ժողովուրդը (որ ի Նորպ,) ունելով Եկեղեցւոյ դաւթի մէջ երկու առանձին դպրոցներ, որոնք բարենպատակ Պօղոս Աւագ Քահանայի աշխատասիրութեամբն հաստատուած, և հոգացողութեամբ Նորին այս երեք տարի է՝ որ տղայոց և օրիորդաց շարունակ դաստուութիւն է լինում. (թէ և ժամանակ առ ժամանակ փոխուած են խեղճ Դպրոցի ուսուցիչներ,) իսկ այժմ Նոյն բարեջան Քահանայի ջանացողութեամբն ևս առաւել հաստատութեամբ յառաջ է ընթանում մեր դպրոցները, որոց միշտ ձեռնտուութեամբ օգնումէ մեր պատուելի ժողովուրդը, որի համար յայտնումենք մեր խորին շնորհակալութիւնը։

Այժմ՝ ինչպէս և յառաջ՝ Դպրոցների Տեսուչն է յիշեալ բարեյոյս Տէր Պօղոս Հայրը, որի անխոնջ աշխատանքը, կարծեմ՝ չ'պիտի մոռացուի մատաղերամ աշակերտների և աշակերտուհիների քնքուշ սրտերից յաւիտեան։

Հոգաբարձուները են Պ. Գէորգն Մ. Յովհաննէսեան և Պ. Գրիգորն Աւետիքեան, որոնք ճանաչելով իրենց ճշմարիտ պարտաւորութիւնները՝ կիսութան միշտ դպրոցաց բարեկարգութեան համար։

Դպրոցների ուսուցիչները՝ Հայոց լեզուի՝ Պ. Բաղդասարն Տէր Յովհաննէսեանց, իսկ Ռուսաց՝ Պ. Վահանն Տէր Ներսեսեանց։

Օրիորդաց Դպրոցի Վարժապետուհիքն են Մայրապետ բարեպաշտուհի Տիկին Մարգարիտ Տէր Յովասափեանց՝ ընթերցանութեան, Ասեղնագործութեան Տիկին Սիրիդուխտ Մ. Մարկոսեան, իսկ Կրօնագիտութեան և Աղգային պատմութեան է Նոյն Պ. Բաղդասարն Տէր Յովհաննէսեանց։

Յոյս ունինք որ մեր ժողովուրդը օրէցօր տեսնելով աշակերտաց և սիրելի աշակերտուհեաց յառաջադիմութեան պտուղները՝ կաւելացնեն իրենց փափաղը և այցելութիւնը դեպի Դպրոցները. որով մի ժամանակ կօրհնուի նոցա բարենպատակ անունները։

Վարդան Բաղդասարեանց։

Է 18ն Դեկտեմբերի 1870 -ին

Ի Բաղդատան Նորի։

ՆՈՒԷՐ ՆՈՒԵՒՈՅ ՀԱՅՈՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ*)

Ահա Հայկական ամպամած հորիզոնի հինօրեայ վարագոյրը բացուելով ու նորա շրաջապա-

*) Այս ուսումնարանի մէջ աւարտելով իմ ուսման ընթացքը, այս, դուրս եմ եկել սրատշաճաւոր